



•Форձարական և տեսական հոդվածներ•*Экспериментальные и теоретические статьи*•
•*Experimental and theoretical articles*•

Դայաստանի կենսաբ. հանդես, 2 (73), 2021

ՈՍԿԵՏՈՒՏԻ ՊՏՂԱՔԵՐՈՒԹՅԱՆ, ՀԱՐՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԸՆԻ ԵՎ
ԹՐԹՈՒՐՆԵՐԻ ԶԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՉԱՆԳԱԾԱՅԻՆ ԲՈՒԿԱՍԱ ԾՐՁԱՆՈՒՄ

Յ.Լ. ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ, Ե.Ն. ԶԱՊԱՆՅԱՆ, Մ.Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Անդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և
վերլուծության գիտական կենտրոն
elenecchapanyan@mail.ru

2012-2020թթ. հետազոտություններով հաստատված է, որ ուկետութիւնը ընթացական բազմացման բոլորապես տևում է 8 տարի և ընթանում է 4 փուլով:

Չանգվածին բռնկման երկորդ փուլի երկորդ տարում ոսկետոտի թղթուրերի դեմ պայքարը բացառում է վասատողի կողմից հասցեից վասմն անտարին:

Հաստատված է, որ զանգվածային բռնկման I և II փուլերում արձանագրված հարսնյակների և ծվակույտերի կշիռները ուկետուսի թրթուրների դեմ պայքարի ահազանգող գործուներ են, իսկ միավոր մակերեսի վրա ձմեռային գործող բների և դրանցում առկա թրթուրների քանակությամբ հիմնավորվում է պայքարի միջցառումների անհրաժեշտությունը:

Ոսկետուտ – հարսնյակներ – ծվակուտեր – թոթուրներ – ձմեռային գործող բներ

Исследованиями 2012-2020 гг. установлено, что цикл массовых размножений гусениц златогузки длится 8 лет и протекает 4-мя фазами. Защитные мероприятия, проводимые во второй фазе второго года массовых вспышек, исключают вред, наносимый им лесу.

Установлено, что зафиксированный вес куколок и яйцекладок в I и II фазах массовых размножений является сигнализирующим фактором защиты против гусениц златогузки, а численность действующих зимних гнезд на единицу площади и количество гусениц в них обосновывают необходимость защитных мероприятий.

Златогузка – куколки – яйцекладки – гусеницы – действующие зимние гнезда

Upon the investigations carried out in 2012-2020 it has been proved that the mass propagation cycle of the caterpillars in the brown-tail moth lasts 8 years with 4 phases.

The struggle against the caterpillars of the brown-tail moth in the second year, upon the second phase of its mass outbreak eliminates the damage caused by the mentioned pest to the forests.

It has been confirmed that the weight of the nymphs and egg sacks recorded in the first and second phase of the mass outbreak are alarming factors for taking struggling measures against the caterpillars of the brown-tail moth. Thus, the need for the fighting measures is strongly grounded by the amount of active winter webworms (*loculus*) on a surface unit and the number of caterpillars found in them.

Brown-tail moth – nymphs – egg sacks – caterpillars – active winter webworms

Ոսկետուտը (*Euproctis chrysorrhoea* L.) պատկանում է թեփուկաթևերի կարգի (Lepidoptera) գեղամաթիթեռների ընտանիքին (Lymantriidae): Սաղարթի լուրջ վնասատու է: Հայաստանում հանդիպում է ամենուրեք, սակայն ամենից հաճախ չոր, լուսավոր անտառներում և այգիներում: Այգիներում հիմնականում վնասում է խնձորենուն, տանձենուն, շլորենուն, անտառներում բոլորից շատ կաղնուն, համեմատաբար սակավ՝ բիշուն, ուռենուն, բարդուն, թեղուն, լորենուն, թխենուն, ջիշխանենուն, կնծենուն, վարդազգի թփուտներից՝ մասրենուն և մամխուն [3, 7]: Տերևներով սևվելով՝ պտղատու և անտառային ծառատեսակներին վնասում են ոսկետուտի թրթուրները [2, 5, 10]: Վերջիններս, բազմաբանակ երևան գալով նշանակալից տարածության վրա, տերևազրկում են սաղարթները, կտրուկ նվազեցնում ծառերի արտադրողականությունն [1] ու հանգեցնում կերաբույս ծառատեսակների չորացման: Ուստի, վնասատուի ի հայտ գալը ժամանակին բացահայտելը հնարավորություն կընձեռի ֆիտոֆագի դեմ պայքարը կազմակերպելու այն ժամանակ, երբ նաև մեծ բանակությամբ նշանակալից տարածքներ չեն գրանցեցրել և ծառերին եական վնաս չի հասցել:

Հատկանշական է, որ ոսկետուտի բազմացման սկզբնական փուլի բացահայտումն ապահովում է վնասատուրով բնակեցված տարածքի լավ կազմակերպված հսկողությամբ և առանձնյակների բանակության ճիշտ հաշվառմամբ: Նշված գործոններով հնարավոր է կանխատեսել նաև ֆիտոֆագի զանգվածային բազմացման միտումն անտառտեղամասում [8], երևան հանել օգտակար ենտոմոֆառունայի անկորուտ բազմացումն ու դրանց օգտակար գործունեությունը, տեսանելի դարձնել վնասակար միջատների դեմ պայքարի միջոցառումներում անհարկի սրսկումները՝ միաժամանակ խնայելով աշխատանքային և դրամական միջոցները [4]:

Ենելով վերոնշյալից՝ նպատակ ենք հետապնդել հետազոտության արդյունքների հիման վրա ներկայացնել ոսկետուտի բանակության փոփոխության սխեմատիկ կորն ըստ տարիների և զանգվածային բոնկման փուլերի, երևան հանել վնասատուի առողջ եզր հարսնյակների կշռի և պտղաբերության (ծվակույտի կշիռ, ծվերի բանակ ծվակույտում) ցուցանիշների փոփոխություններն ըստ բոնկման փուլերի, ոսկետուտ ծմեռային բների կշռով և բանակությամբ կանխատեսել թրթուրների դեմ գարնանային սրսկման (ցողման) անհրաժեշտությունը:

Հետազոտության արդյունքները հնարավորություն կընձեռն, հաշվի առնելով միջատասպան պատրաստուկների անվտանգությունը շրջակա միջավայրի համար, ոսկետուտի թրթուրների դեմ ցողումները կատարելու ժամանակին՝ ապահովելով կաղնուտ անտառների բնափայտի տարեկան աճը:

Նյութ և մեթոդ: Հետազոտության նյութը են հանդիսացել ոսկետուտի թրթուրները, հարսնյակները, հասունը, ծվակույտները և դրանցում առկա ծվերը, ծմեռային գործող բներն ու կաղնի արևելյանը (*Quercus macranthera*): Հետազոտություններն իրականացվել են 2012-2020թթ. Կրագածունի մարգի թթուրների համայնքին հարակից կաղնուտ անտառտեղամասում և լաբորատոր պայմաններում համաձայն ծեռնարկի [8]:

Ուշ աշնանային առաջին ցրտահարությունից հետո կատարվել է ոսկետուտի ծմեռային բների տեղադիտական հսկողություն, որի ընթացքում երեքական ծաղի վրա (Երեքական կրկնողություն), հաշվի առնելով վնասատուի տնտեսական վնասակարության շեմը [9], հաշվել և ստացված արդյունքների հիման վրա որոշվել է կաղնու ծառություն առկա ծմեռային բների սպառնալի բանակությունը: Անտառփորձատեղամասում ընտրված կաղնու նմուշային (մողելային) ծառերը, երիտասարդ էին, որոնց ճյուղերն այլ ծառերի ճյուղերի հետ չեն միակցվել:

Հաբորատոր պայմաններում մասր ճյուղերը ծմեռային բներից հեռացվելուց հետո բները կշռվել և կշռվածքը գրամներով ներկայացվել է որպես բնում առկա թրթուրների բանակության կողմնորոշչի:


Ոսկետուտի զանգվածային բոնկման I-IV փուլերում, ըստ հետազոտության տարիների, կաղնու տերևների հակադիր կողմում տեղադրված ծվակույտներն առանձնացվել են, կշռվել, և հաշվարկվել է դրանցում առկա ծվերի բանակը: Ծվակույտները տերևներից առանձնացվել են նեղ շեղբիկ ունեցող դանակով:

Ըստ զանգվածային բոնկման փուլերի՝ կշռվել են նաև անտառտեղամասից լաբորատորիա տեղափոխված ֆիտոֆագի հարսնյակները:

Ակնադիտական եղանակով և երկփոյա մանրադիտակի օգնությամբ առողջների համեմատ որոշվել է ոսկետուտի ծվերի, թրթուրների և հարսնյակների վարակվածությունը մակարույթներով [8]:

Չանգվածային բռնկման II փուլի գիտափորձերի որոշ ցուցանիշներ ենթարկվել են վիճակագրական վերլուծության [6]:

Արդյունքներ և բնարկում: 2012-2020թթ. հետազոտության արդյունքներից պարզվել է, որ ոսկետուտի թրթուրների զանգվածային բռնկման տևողությունը մեկ բույսի վրա 8 տարի է և ընթանում է 4 փուլով (գծապատկեր 1): Առաջինը՝ թրթուրների զանգվածային բռնկում առաջացնող (ծագող), երկրորդը՝ դրանց բանակությունը մեծացնող, երրորդը՝ զանգվածորեն բազմացած թրթուրների գործող, չորրորդը՝ զանգվածորեն բազմացած թվաքանակը մարողն է:



Գծապատկեր 1. Միևնուն բույսի վրա ոսկետուտի թրթուրների քանակության փոփոխության սխեմատիկ կորը զանգվածային բռնկման շրջանում
(Թթուրների հարակից անտառատարածք (2012-2020թթ.))

Գծապատկեր 1-ում ներկայացված հետազոտության տարիները և սերունդների թվաքանակները գուգաղիպել են: Այսպես, գծապատկերի սխեմատիկ կորից երևում է, որ զանգվածային բռնկման I փուլը տևում է 1 տարի, II, III և IV փուլերը՝ համապատասխանաբար 3, 2 և 2 տարի: Սերունդների քանակը I, II, III և IV փուլերում եղել է նույնքան՝ կազմելով համապատասխանաբար 1, 3, 2 և 2:

Գրական աղբյուրի համաձայն [8]՝ ոսկետուտի զանգվածային բռնկման I և II փուլերի ծևավորման համար կլիմայական պայմանները պետք է լինեն վնասատուի զարգացման համար բարենպաստ՝ տաք և չորային, որոնք հավանաբար տեղ են գտել նաև մեր հետազոտության տարիներին:

Թրթուրների քանակության բռնկման III (գործուն) փուլում մեծաքանակ թրթուրների սննման պրոցեսում տերևագրկվում են կաղնու ծառերը, և, ըստ գրական աղբյուրի [1], արգելակվում է ընափայտի տարեկան աճը:

Վ. Գաբրիելյանի և ուրիշների [1] մենագրության մեջ նշված է, որ 20 տարվա ընթացքում տերևակեր միջատների կողմից տարեկան տերևագրկվել է միջինը 25 հազ. հա անտառ, որի պատճառով ընափայտի տարեկան աճի միջին կորուստը կազմել է 17 հազ. m^3 , առանձին դեպքերում մինչև 30 հազ. m^3 :

Ոսկետուտի թրթուրների պատճառած վնասը նվազեցնելու կամ բացառելու նպատակով, ժամկետային առումով, որպես պայքարի այլընտրանքային ուղի մեր կողմից առաջարկվել է ֆիտոֆագի դեմ ինսեկտիցիդներով պայքարի միջոցառումներն իրականացնել թրթուրների ոչ թե զանգվածային բռնկման III փուլում (խտությունը՝ 30-35 թրթուր/ m^2 սաղարթում), այլ թրթուրների քանակության ավելացման՝ II փուլի երկրորդ տարում (միշին խտությունը՝ 15 թրթուր/ m^2 սաղարթում), (գծապատկեր 1): Վերջինիս ցուցանիշով ապահոված է վնասատուի տնտեսական վնասակարության շեմը (1 թրթուր/գծամետր ճյուղի վրա), [9]: Միաժամանակ հաստատելով պայքարի միջոցառման անհրաժեշտությունը զանգվածային բռնկման II փուլում: Երկրորդ փուլում ֆիտոֆագի հասցրած վնասը նշանակալից չէ նաև այս առումով, որ պայքարի միջոցառումն առաջարկվում է իրականացնել ձմեռային բներից դուրս եկած և նաղարթ տեղափոխված ցածր (II-III) հասակի թրթուրների դեմ:

Գծապատկեր 1-ի սխեմատիկ կորի չորրորդ փուլում արձանագրվել է III փուլում ծևավորված մեծաքանակ թրթուրների թվաքանակի կտրուկ անկում, որը հիմնականում բացատրվում է թրթուրների սևման ընթացքում առաջացած կերաբույսի պակասով և մակարույժ ենտոմոֆագերի գործունեությամբ:

Ոսկետուտի որոշ առանձնյակներ կերաբույսի պակասի պատճառով և կերաբույս փնտրելու պատրիվակով լրել են տերևագուրկ ծառը, իսկ մնացած թրթուրները հաղթահարել են սննդի պակասը և գոյատևել:

Լարորատոր գիտափորձերի արդյունքներով հաստատված է, որ բռնկման IV փուլ թևակոխած ոսկետուտի թրթուրների 33-39%-ը վարակված են եղել մակարույժ միջատներով: Վերջիններիս թրթուրները, սևվելով ոսկետուտի թրթուրների հյուսվածքներով, հարսնյակավորվել են ֆիտոֆագի թրթուրների մարմնից դուրս (նկ. 1):

Հարսնյակների և ծվերի մակարուծվածությունը թրթուրների համեմատ եղել է խիստ սահմանափակ:

Մակարույժ ենտոմոֆագերի տեսակային կազմը ներկայում գտնվում է որոշման փուլում:

Գիտափորձերում ներառված թրթուրները (նաև հարսնյակները) հիվանդության ախտանիշներ չեն ունեցել:

Գրական աղբյուրի համաձայն [8] կույն բույսի վրա զանգվածային բռնկման փուլը 3 տարուց շուտ չի կրկնվում:

Աղ. 1-ում ներկայացված են ոսկետուտի առողջ եգերի հարսնյակների կշռի և պտղաբերության փոփոխություններն ըստ զանգվածային բռնկման փուլերի: Պտղաբերությունը բնութագրվել է ծվակույտերի կշռով և դրանցում առկա ծվերի քանակով:



Նկ. 1. Մակարույժ ենտոմոֆագերի հարսնյակների տեսքը

Աղ. 1-ի տվյալներից երևում է, որ ոսկետուտի հարսնյակների, ծվակույտերի առավելագույն կշիռները և ծվակույտում առկա ծվերի առավելագույն քանակությունները դրսևորվել են ֆիտոֆագի զանգվածային բռնկման I և II միատեղված փուլերում կազմելով համապատասխանաբար 0,31գ, 0,11գ և 605 հատ: Համեմատելով I և II փուլերի կրկնողություններում արձանագրված հարսնյակների կշիռների միշին ցուցանիշները III և IV փուլերի նույնանուն ցուցանիշների հետ, պարզվել է, որ I և II փու-

լերի գիտափորձերում արձանագրված հարսնյակների միջին կշիռները գերազանցել են III և IV փուլերի կրկնողությունների միջին ցուցանիշները՝ համապատասխանաբար 45,0-45,8 և 75,0-76,0 %-ով:

Այլուսակ 1. Ոսկետուտի եգեր ձևավորող հարսնյակների կշռի և պտղաբերության ցուցանիշների փոփոխություններն ըստ փուլերի

Ցուցանիշներ	Տվյալներն ըստ փուլերի				
	I և II	III	IV	Միջին	Նվազագույն
առավելագույն	միջին	միջին	միջին	նվազագույն	
Հարսնյակի կշիռ, գ	0,31	0,20-0,24	0,11-0,13	0,048-0,060	0,03
Զվարույթի կշիռ, գ	0,11	0,05-0,07	0,02-0,03	0,007-0,009	0,003
Ձվերի քանակը ձվակուտում, հատ	605	368-411	161-209	55-70	19

III և IV փուլերում արձանագրված ձվակույտերի կշռի և ձվերի քանակությունների միջին ցուցանիշների նվազումը I և II փուլերի համեմատ տատանվել է համապատասխանաբար 40,0-57,1, 86,0-87,1 և 49,2-56,3, 83,0-85, 1%-ի սահմաներում: Յատկանշական է, որ առաջին և երկրորդ փուլերում տերևների վրա դրված ձվակույտերից առանձնացված ձվերը բռնկման երրորդ և չորրորդ փուլերում ներկայացված ձևավորված ձվերի համեմատ եղել են ակնադիտորեն խոշոր:

Աղ. 1-ում ներկայացված զանգվածային բռնկման I և II փուլերի ցուցանիշները կիրառելի են նաև ոսկետուտի դեմ պայքարի ահազանգման գործընթացում: Այսպես, նոր կշռված հարսնյակների և ձվակույտերի կշռային տվյալները եթե համապատասխանեն աղ. 1-ում ներկայացված I և II փուլերի միջին՝ համապատասխանաբար 0,20-0,24 և 0,05-0,07գ ցուցանիշներին, կամ արձանագրված նոր տվյալները լինեն նշված ցուցանիշներին շրջակայքում, կարելի է հստակորեն պնդել, որ վնասատուն թրթուրների քանակության մեծացման (ավելացման) փուլում է և, ըստ այդմ, որպես ահազանգ, ոսկետուտի թրթուրների դեմ ծրագրել պայքարի միջոցառումների իրականացում:

Նոր կշռված հարսնյակների և ձվակույտերի կշռային համեմատաբար ցածր ցուցանիշները համեմատելով աղ. 1-ում ներկայացված նույնանուն ցուցանիշ-սանդղակի հետ՝ հնարավոր է պարզել ոսկետուտի զանգվածային բռնկման առկա փուլն ու միտումը:

Թիվ 2 այլուսակում ներկայացված տվյալներից երկում է, որ փորձի սխալի և տատանման գործակցի ցուցանիշները՝ տարբերակներում տատանվելով համապատասխանաբար 1,9-4,6 և 3,75-7,91%-ի սահմաններում, հաստատել են, որ գիտափորձերի արդյունքները հավաստի են:

Քառակուսային շեղման պարամետրն օգտագործվել է տատանման գործակցի և միջին սխալի որոշման գործընթացներում:

Թիվ 2 նկարում ներկայացված է ոսկետուտի հարսնյակների տեսքը հասունի դուրս գալուց հետո (ա, բ) և նախքան դուրս գալը (գ): Ակներև է ոսկետուտին բնորոշ հարսնյակների սրածայր վերջավորությունը:

Ոսկետուտի թրթուրների դեմ պայքարի անհրաժեշտությունը որոշվում է նաև ոսկետուտի ձմեռային գործող բների քանակությամբ:

Մեր հաշվարկներով հաստատված է, որ կաղնու մասի ճյուղերից առանձնացված ոսկետուտի 1-2 գրամանոց ձմեռային գործող բույնը ներառում է 194-283 թրթուր, 3-4-գրամանոց բույնը՝ 433-618 թրթուր:

Կշռված ձմեռային բներում առկա ոսկետուտի թրթուրների այլ թվաքանակներ ներկայացված են նաև մասնագիտական գրականության մեջ [7, 8]:

Մեր կողմից կշռված ձմեռային գործող բների քանակություններն օգտագործվել են որպես ոսկետուտի տնտեսական վնասակարության շեմի բնութագրիչներ:

Աղյուսակ 2. Ուսկետուտի զանգվածային բռնկման II փուլում արձանագրված հարսնյակների, ծվակույտերի առավելագույն կշիռների և ձվերի քանակության վիճակագրական ցուցանիշները

Տարբերակներ	Կշռի (\bar{x}) և քանակության (հատ) միջին ցուցանիշները	Բառակուսային շեղումը	Տատանման գործակիցը, %	Միջին սխալը	Փորձի սխալը, %
				σ_x	P
Հարսնյակներ	0,293	0,022	7,51	0,013	4,4
Եվակույտեր	0,1067	0,006	3,75	0,002	1,9
Ձվեր	560,67	44,353	7,91	25,608	4,6



Նկ. 2. Ուսկետուտի հարսնյակների ծածկույթի պատովածքների տեսքը թիթեռի դուրս գալուց հետո (ա, բ) և ամբողջական տեսքը (գ) իմագոյի դուրս գալուց առաջ (խոչընացումը՝ 3,2 x)

Այսպես, որպես վնասատուի տնտեսական վնասակարության շեմ, առաջարկել ենք ֆիտոֆագի թրթուրների դեմ ինսեկտիցիդներով պայքարի միջոցառումներն իրականացնել, երբ 3 մ³ կաղնու սաղարթում առկա է մեկից ավելի 1-2-գրամանոց (ծավալով փոքր) կամ 3-4-գրամանոց (ծավալով համեմատաբար խոշոր) ձմեռային գործող մեկ բույն (կշռված ձմեռային բների ծավալով փոքր և խոշոր ձևակերպումները կատարվել են մեր կողմից):

Աշնանային տերևաթափից հետո կաղնու ծառուլքում առկա ուսկետուտի վերոնշյալ ձմեռային բների դրսևորումները եղել են լավ տեսանելի:

Այսպիսով, հետազոտության արդյունքներից եկել ենք հետևող տեսանության, որ ուսկետուտի թրթուրների զանգվածային բռնկումն արտահայտվում է չորս փուլով և ընդհանուր առմամբ տևում է 8 տարի:

Ֆիտոֆագի կողմից հասցելիք վնասը նվազեցնելու կամ բացառելու նպատակով թրթուրների դեմ պայքարի միջոցառումներն անհրաժեշտ են կատարել առանձնյակների քանակության ավելացման՝ երկրորդ փուլի երկրորդ տարում (թրթուրների միջին խտությունը՝ 15 թրթուր/մ² սաղարթում):

Թրթուրների սնման պրոցեսում կաղնու ծառերի տերևագրկման արդյունքում առավելացույն վնասը հասցվում է զանգվածային բռնկման երրորդ փուլում:

Չորրորդ փուլում ընթացել է երրորդ փուլում ձևավորված մեծաքանակ թրթուրների թվաքանակի կտրուկ անկում, որը հիմնավորվել է կերաբույսի պակասով և մակարովյա հնտումոֆագերի գործունեությամբ:

I և II միավորված փուլերում ձևավորված հարսնյակների, ծվակույտերի կշիռները և ձվերի քանակությունները գերազանցել են III և IV փուլերում արձանագրված

Նույնանուն ցուցանիշները, և վերևում նշված պարամետրերը կիրառելի են ոսկետուտի թրթուրների դեմ պայքարի ահազանգի գործընթացում:

Չմեռային գործող բների և դրանցում առկա թրթուրների քանակություններով հնարավոր է հիմնավորել ոսկետուտի թրթուրների դեմ պայքարի անհրաժեշտությունը:

Երկրորդ փուլում արձանագրված հարսնյակների ճշգրիտ կշիռների և ձվերի առավելագույն քանակության միջին ցուցանիշների վիճակագրական վերլուծությամբ հաստատված է, որ գիտափորձերի արդյունքները հավաստի են:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գաբրիելյան Վ., Նայբանդյան Ա., Դարբինյան Ն. Անտառը և նրա նշանակությունը Հայաստանի լեռնային պայմաններում: Երևան, էջ 49-50, 2001:
2. Թերլեմեզյան Յ.Լ., Սարգսյան Ս.Ա., Սարգսյան Ա.Ա. Շակորյան Ա.Խ. Ոսկետուտի թրթուրների դեմ բակտերիական և բիմիական պատրաստուկների ենթաշեմային խոռոչուններով փորձարկումներ խնձորենու այգիներում: Ազրոգիտություն և տեխնոլոգիա (Միջազգային գիտական պարբերական): Երևան, 66, 2, էջ 72-75, 2019:
3. Հայաստանի գյուղատնտեսական կուտուրաների, անտառների և պահեստների վնասատուները: Երևան, ՀՍՍՀ գիտ. ակադեմիա, էջ 655-657, 1976:
4. Դասումյան Ս.Ա., Յովսեփյան Յ.Յ. Տարագույզ մետաբազորի, ոսկետուտի և օղակավոր բոժնության վնասակարության շեմը: Ազրոգիտություն, Երևան, Ազրոպիտես, N 5-6, էջ 262-266, 1998:
5. Սարգսյան Ա.Ա., Մովսեսյան Յ.Ս., Դագարյան Ն.Փ., Սարգսյան Ա.Ա., Մեսրոպյան Յ.Ռ., Յովսեփյան Յ.Յ. *Bacillus thuringiensis* տեսակի տեղական շտամների կենսաբանական արդյունավետությունը ոսկետուտի թրթուրների դեմ //Հայաստանի կենսաբանական հանդես: Երևան, LXIII, 4, էջ 74-77, 2011:
6. Ասմարին Ի.Պ., Վորոբյեվ Ա.Ա. Статистические методы в микробиологических исследованиях. Л.: Медгиз, 180 с., 1962.
7. Միրզոյան Հ.Ա. Дендрофильные насекомые лесов и парков Армении. Ереван, Айасстан, с. 86-90, 1977.
8. Надзор, учет и прогноз массовых размножений хвое- и листогрызуших насекомых в лесах СССР. М., Лесная промышленность, 525 с., 1965.
9. Экономические пороги вредоносности главнейших вредных видов насекомых и клещей. М., Агропромиздат, с. 20, 1986.
10. Chapanyan E., Sargsyan M. The biological efficiency of the local bacterial insecticide of *Bacillus thuringiensis* species against the caterpillars of the brown – tail moth //Bulletin of National Agrarian University of Armenia, 3, p. 5-8, 2018.

Ստացվել է 17.02.2021